

## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

### ԵՒՍ ՄԻ ԱՆԳԱՄ ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑՈՒ ԱՆՁԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Անցեալ դարի 70-ական թթ. սկզբից հայ երաժշտական միջնադարագիտութեան մէջ ծայր է առել մի տեսակետ կամ աւելի ճիշտ՝ վարկած, որի համաձայն եղել են Ստեփանոս Սիւնեցի անունով երկու անձեր՝ Ստեփանոս Սիւնեցի Ա, իբրեւ թէ V դ. ապրած, եւ Ստեփանոս Սիւնեցի Բ, VIII դ. բոլորին յայտնի փիլիսոփայ թարգմանիչ, բերական, շարականագիր եւ երաժշտութեան տեսաբան: Վարկածի հեղինակն էր վաստակաշատ երաժշտագէտ Նիկողոս Թահմիզեանը, որն այդ հարցին նուիրուած ծաւալուն յօդուած հրապարակեց (1), հետագայ իր բոլոր աշխատութիւններում, (2), Հայկական Սովետական Հանրագիտարանում (3) եւ այլուր (4) եւս տարածելով այդ վարկածը:

Սակայն ի մօտոյ ծանօթանալով եւ ուսումնասիրելով վերոնշեալ հարցը, մենք յանգել ենք այլ տեսակետի, որը հայագիտութեան մէջ թէեւ նոր չէ, բայց, կարծես, մոռացութեան էր մատնուած: Ուստի անհրաժեշտութիւն ծագեց ներկայացնելու Ստեփանոս Սիւնեցու՝ հայ հոգեւոր երգարուեստի եւ նրա տեսութեան մէջ կարեւոր ներդրումն ու վաստակը՝ ներառնելով ինչպէս, արդէն արտայայտուած կարծիքներ, այնպէս էլ՝ լրացուցիչ նոր տուեալներ:

Մեր բոլոր միջնադարեան մատենագիրներն ու պատմիչները գրեթէ, միակարծիք են Ստեփանոս Սիւնեցուն՝ իբրեւ երաժշտի վերաբերող իրենց հաղորդած տեղեկութիւնների մէջ: Այսպէս, եթէ հետեւենք ժամանակագրական կարգին, ապա Ստեփանոս Սիւնեցու մասին վկայող

ամենավաղ կարեւոր տեղեկութիւնները առկայ են հենց իր իսկ վարձում, որն, ինչպէս յայտնի է, ունեցել է երեք խմբագրութիւն եւ ի մի բերուել Մխիթար Այրիվանեցու ձեռքով: Ահա թէ ինչ ձեռով են այդ տեղեկութիւնները հասել մեզ. «...արար եւ շարականս աւագ օրհնութիւններն զէ. ձայնին եւ Վառին մնաց, որ տէր Ներսէս ասաց ի նոյն ոճ քանիցն»:(5)

Տարբեր մատենագրական աղբիւրների հաղորդած տեղեկութիւններից առանձնանում է Ստեփանոս Օրբելեանի հաղորդածը. «Բաժանեաց եւ զուրն ձայնս եւ կարգեաց, շարեաց զՅարութեան օրհնութիւնս, երգեաց եւ կցուրդս քաղցրահամս, յարմարեաց եւ ստողոգին Յինանց յոյժ խորհրդաւոր, եւ զպահոցն որ զաղուհացն երգի» (6): Ուշագրաւ է նաեւ միջնադարեան «ձայնից» մեկնութիւններից մէկի խորագիրը. «Բարսղի Կեսարեցւոյն ասացեալ յաղագս ձայնից, զոր թարգմանեալ է Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի, զի նա եղեւ երաժիշտ հմուտ ամենայն ձայնից եւ քաժանեաց զձայնն ի մասունս եւ եդ զյարուկայք ի վերայ ձայնին»:(7)

Ըստ վերը բերուած մատենագրական աղբիւրների՝ ակնյայտ է դառնում Ստեփանոս Սիւնեցու հսկայական դերը, որի հետ է կապուած Ութձայն համակարգի քարեկարգումը («քաժանեաց եւ զուրն ձայնս...»), եկեղեցական տօներին նուիրուած 8-9 երգերից քաղկացած բիւզանդական կանոնի ժանրի ներմուծումը («...կարգեաց շարեաց զՅարութեան օրհնութիւնս...»), ինչպէս նաեւ խազային



նշանների նախնական կիրառութեան գործընթացը («...եւ եղ զյարուկայք ի վերայ ձայնին...»):

Կանոնի ժանրի ներմուծման նախնական փուլը կապուած է Ստ. Սիւնեցու կողմից Յարութեան Աւագ օրհնութիւնների՝ ութ ձայնեղանակներով երգուող ութ մեծ շարքերի ստեղծման հետ, որոնք երգուում են Նոր Կիրակիից մինչեւ Հոգեգալուստ՝ յաջորդաբար օրը մէկական կարգ (8): Տուեալ երգաշարքերը որոշ էական յատկութիւններով սկզբունքօրէն տարբերակուում են ոչ միայն պարզագոյն արիսայիկ կցուրդներից, այլեւ ընդհանրապէս շարականների նկատմամբ մեծամասնութիւնից: Բիւզանդական պաշտօնեւրոքեան մէջ դրանց համապատասխանում են *janastashmevnai* կոչուող օրհներգները, որ նոյնպէս ստեղծուել են VII-VIII դարերում:

Յարութեան Աւագ օրհնութիւնները կազմող ութ շարքերից իւրաքանչիւրը բաղկացած է Հին Կտակարանի 10 մարգարէական օրհնութիւնների հիման վրայ կաղապարուած մասերից: Օրհնութիւններ, որ հնուց ի վեր Հայ եկեղեցին ներմուծել էր ժամերգութեան մէջ: Մարգարէական օրհնութիւնները ժամանակին կցուել են սաղմոսականոններին եւ ունեցել վառ արտայայտուած երգային զարդոյորուն մեղեդային նկարագիր, սակայն հետագայում չեն պահպանուել ժամասացութեան մէջ.

1. Օրհնեսցուք զՏէր, զի փառօք է փառաւորեալ (ելից ԺԵ 1)
2. Նայեցարուք, երկինք, եւ խօսեցայց, եւ լուիցէ երկիր զպատգամս բերանոյ իմոյ (Բ Օր. ԼԲ 1)
3. Զի հուր բորբոքեցաւ ի բարկութենէ Իմմէ (Բ Օր. ԼԲ 22-28)
- 4.- Ծաներո՛ւք եւ տեսէք, զի ես եմ, եւ ոչ գոյ Աստուած բաց յԻմէն (Բ Օր. ԼԲ 39-43)

5. Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր, եւ բարձրացաւ եղջիւր իմ յԱստուած Փրկիչ իմ (Ա. Թագ. Բ. 1-10).

6. Ի գիշերաց կանխէ հոգի իմ առաւօտ առնել առ Քեզ, Աստուած (Ես. ԻԶ 9)

7. Ես ասացի ի վերանալ յինէն աւուրց իմոց, թէ գնացից ես ի դրունս դժոխոց (Ես. ԼԸ 10-14)

8. Օրհնեցէ՛ք զԱստուած յօրհնութիւն նոր, զի իշխանութիւն Նորա ի բարձունս փառաւորի (Ես. ԽԲ 10-13).

9. Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի, եւ լուաւ Աստուած յանդերոյ դժոխոց աղաղակի իմում (Յովն. Բ, 3)

10. Տէ՛ր, զլուր Քո լուայ եւ երկեայ. Տէ՛ր հայեցայ ի գործս Քո եւ զարհուրեցայ (Ամբ. Գ:2):

Ինչպէս տեսնում ենք, սրանք 10-ական մասերից բաղկացած 8 խոշոր շարքեր են, որ նախատեսուած են 8 եղանակներով երգելու համար: Բնորոշ է այստեղ «խիստ ոնի» Ութձայնին հետեւելու սկզբունքը (չորս բուն եւ չորս կողմ՝ եղանակ՝ առանց դարձուածների եւ ստեղծների), ինչը հաղորդում է նրան իւրայատուկ փոքրածաւալ առանձին հաւաքածուի նշանակութիւն (համեմատելի յունական «Օքթօիստոս երգչական գրքի հետ»), որտեղ փաստօրէն հաստատուում էր Ութձայնի գաղափարը: Սրա հիման վրայ բիւրեղացաւ Շարակնոցի կանոնի հայկական տարատեսակը, որն ընդգրկում է 8-9 երգ (9):

Աւագ Օրհնութիւններում ակնյայտ է նաեւ պոետիկայի ոլորտում արիսայիկ կցուրդների համեմատութեամբ տեղի ունեցած առաջընթացը: Այստեղ արդէն խօսք չկայ բրիստոնէական կրօնի գլխաւոր դաւանաբանական դրոյթների թեզիսային, հանրամատչելի շարադրանքի



մասին, Շարականագիրը ցուցաբերում է բարձր մակարդակի համապարփակ, ասոցիատիվ աստուածաբանական մտածողութեան, ամբողջ սրբազան պատմութիւնը համակարգելու, ի մի բերելու ձգտում: Վերջինս այստեղ ներկայացուած է իբրեւ խորհրդանշական փոխադարձ կապերով ու զուգահեռներով յագեցուած ինքնամփոփ, կայուն ամբողջութիւն:

Ստեփանոս Սիւնեցուց յետոյ ասոցիատիվ բանաստեղծական ոճը լայն ու բազմակողմանի զարգացում է ստանում հետագայ դարերի հեղինակների մօտ՝ իր գագաթնակէտին հասնելով XII-XIIIդդ. շարականագիրների ստեղծագործութիւններում:(10)

Իսկ ի՞նչ աղբիւրների վրայ է հիմնուել Նիկ. Թահմիզեանը երկու համանուն երաժիշտների վարկածն առաջ քաշելիս: Նախեառա՛ջ՝ Կիրակոս Գանձակեցու Պատմութեան մէջ առկայ յիշատակութիւնների վրայ, որտեղ Ստեփանոս Սիւնեցու անունը հանդիպում է երիցս, այսպէս.

ա) «Որոց վարդապետք եւ ուսուցիչք՝ Սուրբն Սահակ եւ Մեսրոպ, եւ գլխաւորք յաշակերտացն՝ Սուրբն Յովսէփ, եւ Յովհան, եւ Ղեւոնդ, եւ Սահակ, եւ Մովսէս Քերթողահայր, եւ Մամբրէ Վերծանող, նորուն եղբայր, եզնակ եւ Կորիւն, Սուրբն Եղիշէ, Դաւիթ փիլիսոփայ եւ Յովհաննէս, տէր Աբրահամ, Արձան, Մուշէ, Արձան, Խոսրով, Ղազար, եւ յետոյ Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս...» (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 28):

Բ) «Եւ յետոյ մեծն Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս, բազում մեկնութիւնս գրոց սրբոց եթող՝ աւետարանացն համառօտ, եւ Յորայ, եւ Դանիէլի, եւ

զպատասխանիս թղթոյն Գերմանոսի պատրիարքի Կոստանդնուպօլսի» (նոյն տեղում, էջ 29):

գ) «Յայսմ ժամանակի եւ թուականիս հայոց ՄԻԲ էր Ստեփանոս դրան երեց, որ բանիբուն ճանաչիւր, եհաս ի կատարումն ամենայն իմաստասիրական եւ գրամարտիկոս արուեստից՝ հանդերձ հոգեւորական առաքինութեամբ: Էին եւ վարդապետք աշխարհիս Հայոց ընտրեալք եւ լուսաւորք՝ տէր Եփրեմ եւ Անաստաս եւ Խաչիկ եւ Դաւիթ Հոռմայրեցի, եւ մեծն իմաստասէրն Ստեփանոս Սիւնեցի, աշակերտ Մովսիսի, զոր ի վերագոյնն յիշատակեցաք, որ թարգմանիչ եղեւ ի յունականէն ի հայ լեզու, եւ ի վերայ թարգմանութեանն արար եւ երգս հոգեւորս քաղցր եղանակաւ՝ շարականս եւ կցուրդս եւ այլ երգս արար եւ մեկնութիւն համառօտ՝ աւետարանացն, եւ քերականին, եւ Յորայ, եւ «Տէր, եթէ շրթանցն գիշերոյ» (նոյն տեղում, էջ 72):

Անգէն աչքով էլ կարելի է նկատել, որ առաջին իսկ պարբերութեան մէջ, ուր բերուած է Ստեփանոս Սիւնեցու անունը, ինչ-որ անհամաձայնութիւն եւ հակասութիւն կայ:

Հետագայ խառնաշփոթի պատճառը, մեր կարծիքով, «... յետոյ Ստեփանոս Սիւնեցի եպիսկոպոս» արտայայտութիւնն է, որը հետեւում է Սուրբ Սահակի եւ Մեսրոպի աշակերտների փայլուն փաղանգի թուարկումից յետոյ: Դուրսէ պատմիչը այդպիսով ցանկացել է ընդգծել իր վերաբերմունքն ու գնահատականը Ստեփանոս Սիւնեցու հանդէպ, մատնանշել նրան որպէս ոսկեդարեան մշակութային աւանդոյթների անմիջական եւ արժանի հետեւորդ, հելլենական դպրութեան կրող եւ



հանրագիտակ մտաւորականի տիպար, որի գրչի արգասիքն էին Աւետարանի համառօտ մեկնութիւնը, ինչպէս նաեւ Յորի, Դանիէլի եւ Եզեկիէլի գրքերի մեկնութիւնները, Գերմանոս պատրիարքի թղթի պատասխանը, Նեմեսիոսի եւ Գրիգոր Նիւսացու յայտնի երկասիրութիւնների թարգմանութիւնները եւ Մեկնութիւն քերականին ձեռնարկը։(11) Հենց այդ «եւ յետոյ Ստեփանոս Սիւնեցի եպիսկոպոս...» արտայայտութիւնը հիմք է ծառայել Ստ. Սիւնեցի Ա-ի վարկածը առաջ քաշելու համար, ինչը բացայայտ հակասութիւն է պատմական իրողութեան հետ։

Միւս աղբիւրը՝ հայ միջնադարեան մատենագրութեան մէջ յայտնի շարականագիրների ցուցակներն են, որոնցից հնագոյնն է Վանական վարդապետի «Հարցմունք եւ պատասխանիք» ձեռնարկում գետեղուած ցուցակը։(12)

Հայ միջնադարեան մատենագրութեան մէջ յայտնի են տարբեր հեղինակների կողմից ստեղծուած շարականագիրների մի շարք ցուցակները, (13) որոնցից հնագոյնն է Վանական վարդապետի «Հարցմունք եւ պատասխանիք» ձեռնարկում գետեղուած ցուցակը։(14) Նմանատիպ ցուցակների հեղինակներ են Սարգիս Երէցը, Գրիգոր Տաթեւացին, Անանուրը։(15) Շարականագիրներին նուիրուած չափածոյ երկեր են ստեղծել Առաքել Սիւնեցին, Ստեփանոս Զիգ Զուղայեցին, Յակոբ Ասեցին։(16) Ուշադիր հետեւեմք նշուած հեղինակների հաղորդած տեղեկութիւններին։ Դրանց նման մեծամասնութիւնը Աւագ Օրհնութիւնների յօրինումը ընծայում է Ստեփանոս Սիւնեցուն։ Այն հանգամանքը, որ նրանք նկատի ունեն VII-VIIIդդ. ապրած մատենագիր եպիսկոպոսին, հետեւում է նաեւ հեղինակների

որդեգրած ժամանակագրական կարգից, որի համաձայն յիշատակուում են հայ հոգեւոր երգարուեստի երախտաւորները՝ սկսած Մաշտոցից եւ Սահակից մինչեւ Կիրակոս Երզնկացի։ Մէջքերենք խնդրոյ առարկայ հեղինակին վերաբերող մասերը միայն։

Վանական վարդապետ. «ԶՅարութեան Աւրհնութեանն է ձայնն՝ Ստեփաննոս Սիւնեցին, եւ զՎառն Ներսէս Կաթողիկոս»։(17) Սարգիս Երէց. «ԶՅարութեան Աւրհնութեանն Զեաւթն ձայնին», «զՍրբութիւն սրբոցն Ստեփաննոս Սիւնեցին ասաց»։(18)

Գրիգոր Տաթեւացի. «Զաւագ օրհնութիւնք զէ ձայնին Ստեփանոս Սիւնեցին»։(19)

Առաքել Սիւնեցի. «Յաղթող բանիւ երանելին՝ Տէր Ստեփանոսն Սիւնեցին»։(20)

Ստեփանոս Զիգ Զուղայեցի. «Եւ զօրհնութիւնս որ մեծ կոչին՝ Սուրբ Ստեփանոսն Սիւնեցին»։(21)

Յակոբ Ասեցի.

«Էրեց Յոհան (Յովհ. Վանական) այսպէս իմայ՝

Աւագ օրհնութեանն որ կայ,

Զայն եօթն Սիւնեաց Ստեփանոսաց,

Սուղ թէ մընաց նըշան չըկայ»։(22)։

Անանուր խմբագրութիւն, ԺԸ-ԺԹդդ. «Ստեփաննոս Սիւնեցի առաջինն, որ յաշակերտաց անտի Սրբոց Թարգմանչաց, զեօթն ձայնս աւագ օրհնութեանց»։(23)

Ահա այս մէջքերումների ցուցակն ամփոփող Անանուրի հաղորդած տեղեկութիւնն է Թախմիզեանի աղբիւրը։ Ի՞նչ կարելի է եզրայանգումների է հասել Թախմիզեանը։ Նա վերագրել է Ստեփանոս Սիւնեցու (Երկրորդի) ողջ վաստակը, այն է՝



Յարութեան Աւագ օրհնութիւնների ստեղծումը՝ 80 երգ (!) Ստեփանոս Սիւնեցի Ա-ին: Յայտնի է, որ Աւագ օրհնութիւնների ստեղծումը ազդարարում էր բիւզանդական հիմներգական կանոնի՝ որպէս VIII դ. առաջատար հիմներգական երաժշտաբանաստեղծական տեսակի մուտքը հայ շարականերգութիւն: Տուեալ տեսակը ձեւաւորուել է VIII դարից ոչ շուտ, Անդրէաս Կրետացու, եւ ապա՝ Կոզմա Մայումացու եւ Յովհաննէս Դամասկացու ստեղծագործութեան մէջ: Բնական է, որ գիտելիքները կատարելագործելու եւ ընդլայնելու նպատակով Կոստանդնուպոլիս մեկնած՝ Ստեփանոս Սիւնեցին, հաղորդակից դառնալով բիւզանդական եկեղեցական երգաստեղծութեան նորագոյն ձեւերումներին, հայկական հիմներգական կանոնը ստեղծելիս որպէս երեւոյթ գոյութիւն չի ունեցել V դարում: (24)

Դրա հետեւանալով խեղաթիւրուել է իրական Ստեփանոս Սիւնեցու երաժշտագիտական վաստակի խնդիրը: Թահմիզեանը նրան վերապահել է քաւական համեստ մի դերակատարում՝ արդէն շրջանառութեան մէջ եղած շարականների վերակարգաւորումը ըստ Ութաւայնի (այդպէս է նա մեկնաբանում Ստ. Օրբելեանի «կարգեաց շարեաց» արտայայտութիւնը), որոնք ի մի էին բերուած, հաւանաբար, Բարսեղ Ճոնի «Ճոնընտիր» երգարանում եւ՝ «Մեկնութիւն քերականին» երկասիրութեան միջի երաժշտութեանը վերաբերող ասոյթները: Նորարար բեղուն ստեղծագործողի, բարեկորդի դերն ամբողջութեամբ ընծայուել է V դ. ենթադրեալ Ստեփանոս Սիւնեցուն: (25)

Սակայն, ուշադիր փնտելով Անանուն խմբագրութիւնը, կարելի է եզրակացնել, որ Ստեփանոս Սիւնեցի

Առաջին եւ երկրորդ նշելով՝ ցուցակի հեղինակը, բացի VIII դ. Ստեփանոս Սիւնեցուց, նկատի է ունեցել միւս յիշատակուող շարականագիր Ստեփանոսին, Մովսէսի կամ Ապարանցի եպիսկոպոսին, որն ապրել է X դ., եւ որի հեղինակած «Սրբութիւն սրբոց» անուանական ծայրակապով 983թ. յօրինուած շարականը՝ Բիւզանդիայի Վասիլ կայսրի նուիրաբերած մի քանի նշանաւոր սրբութիւնների եւ Ապարանցի խաչի կապակցութեամբ, շարականագիրների ցուցակի որոշ հեղինակների կողմից վերագրուել է Ստեփանոս Սիւնեցուն՝ դարձնելով նրան Աւագ Օրհնութիւնների եւ «Սրբութիւն սրբոց» շարականի հեղինակ (Սարգիս Երեց), կամ «Ստեփանոս Սիւնեցի երկրորդ»՝ զՍրբութիւն սրբոց խաչին, զոր ոմանք Ստեփանոսի Մովսէս եպիսկոպոսի տան, որ Ապարանցի եւս կոչի» (26) (Անանուն խմբագրութիւն): Սակայն որոշ հայագէտներ յստակօրէն զանազանել են այդ երկու շարականագիրների հեղինակումները, ինչպէս, օրինակ, Հ. Ղ. Ալիշանը, որը նշել է. «Սիւնեցի եւ Մովսէսի Ստեփանոսեանց»: (27)

Այդ դէպքում, իրօք, ունենալ Ստեփանոս անունով երկու նշանաւոր շարականագիր, բայց ոչ Սիւնեցի մականունով: Պարզուում է, որ Անանուն խմբագրութեան երկու Ստեփանոս շարականագիրների մասին վկայող հատուածները Թահմիզեանի կողմից սխալ են մեկնաբանուել, հաւանաբար նաեւ Մ. Զամչեանի կարծիքի ազդեցութեան ներքոյ, որի համաձայն «Աւագ Օրհնութիւնները կրնան գրուած ըլլալ Ե. դարու Ստեփանոս Սիւնեցիէն, եւ կանոնի վերածուած՝ Ը. դարու Ստ. Սիւնեցիէն»: (28) Իրականում խօսքն այստեղ ոչ թէ V եւ VIII դդ.



հեղինակների մասին է, այլ VIII եւ X դդ., այսինքն՝ Ստեփանոս Սիւնեցի եպիսկոպոսի մասին: Ահա սրանք են, մեր կարծիքով, «Ստեփանոս Սիւնեցի Առաջին» եւ «Ստեփանոս Սիւնեցի երկրորդ» շարականագիրների ներքոյ հասկացուող հեղինակները:

Ըստ Ղազար Զահկեցի վարդապետի վկայութեան, Ստեփանոս Սիւնեցին «երգեաց գերզս շարականաց քաղցր եւ գեղեցիկ եղանակաւ եւ մեծ խորհրդով: ԶՄննդեան Քրիստոսի, եւ զՄկրտութեան, եւ եկաւորութեան ի Բեթանիա եւ յերուսաղէմ, եւ զՄեծի շաբաթու զԶարչարանացն, եւ զՅարութեան, եւ զՀամբարձմանն, եւ զՀոգւոյն Սրբոյ Գալըստեանն, եւ զԵկեղեցւոյ, եւ զԱւագ Օրհնութեան կարգք, բաց ի Վառէն, եւ այլ տօնից տէրունականաց եւ սրբոց բազմաց, որ մինչեւ ցայսօր պաշտի յեկեղեցի Հայաստանեայց:(29) Ըստ էութեան, Ղազար Զահկեցին, քաջ գիտակցելով Ստեփանոս Սիւնեցու դերը Շարականցի կարգաւորման գործում, թուարկում է այն կանոնները, որոնք խմբագրել եւ հեղինակել է (մասնաւորապէս՝ Աւագ Օրհնութիւնները) Ստեփանոս Սիւնեցին:

Հ. Գաբրիէլ Աւետիսեանը «Բացատրութիւն շարականաց» մեծածաւալ աշխատութեան մէջ, անդրադառնալով խնդրոյ առարկայ հարցին, գրել է. «Յօրինող Աւագ Օրհնութեանց ասի Ստեփանոս Սիւնեցի, որ եկաց ի վերջ եօթներորդ դարուն, բաց ի Վառձայնէն՝ զոր ասէն արարեալ Ներսէսի Շնորհալոյն. ըստ որում յիշէ զայս յետինս Կիրակոս պատմիչ: Բայց ըստ այս բերեւս տարակոյս արկանիցէ այն, զի ի Մագիստրոսի թուղթս բերի բան երկրորդ տան իններորդ շարականին. «Որ յաթոռս քերովբէական բազմեցաւ ընդ Հօր», թէպէտ նա ոչ իբրեւ բան

շարականի բերէ զայս»:(30)

Հ. Ղ. Ալիշանը բազմիցս անդրադարձել է Ստեփանոս Սիւնեցու երաժշտական վաստակին. «...Աւագ Օրհնութիւնն բաւական էին ոչ միայն նմա միայնոյ ի փառս, եթէ եւ չէր այլ ինչ մնացեալ յերկոց նորին, այլ եւ համօրէն ազգի նորին՝ եթէ ջնջեալ բարձեալ էր բնաւ այլ դպրութիւն սորա (...) գոհար, որ արդ եւ ի միջի դպրութեան մերոյ, մանաւանդ ի շարս սրբազան երգոց, գերազանցօրէն փայլէ եւ փայլեցէ մինչեւ երգարանեալն ի նմանէ, Յարուցեալն ի մեռելոց՝ յարուցէ զննջեցեալսն յուսով՝ յանմահութիւն»:(31) Իսկ «Շնորհալի եւ պարագայ իւր» աշխատութեան մէջ այսպէս է բնորոշել երգահանին. «Ը դարուն սկիզբը Ստեփանոս Սիւնեցին՝ իր գերազանց շարականօքն»:(32):

Ի դէպ, Ստեփանոս Սիւնեցի Ա-ի մասին չի յիշատակուում ամենավստահելի հեղինակներից նաեւ Մաղափա արքեպս. Օրմանեանը: Նրան յայտնի է ընդամէնը մէկ՝ 735թ. նահատակուած Ստեփանոս Սիւնեցի եպիսկոպոսը:(33)

Գնել Ծ. Վրդ. Գալեմֆեարեանը եւս Աւագ Օրհնութիւնները վերագրում է Ստեփանոս Սիւնեցուն, որին եւ համարում է Օրհնութեան շարականի Հայ Եկեղեցու երգեցողութեան մէջ ներմուծած առաջին հեղինակը:(34)

Մ. Արեղեանը, ուսումնասիրելով Յարութեան Օրհնութիւնների հեղինակի հարցը(35) եւ յատկապէս հիմնելով Ստ. Օրբելեանի նշուած վկայութեան վրայ, յանգել է այն եզրակացութեան, թէ Ստեփանոս Սիւնեցին «մեքենայօրէն կարգել, շարել է տասը մարգարէական օրհնութիւնների կցուրդներն իբրեւ Յարութեան Օրհնութիւններ»:(36) Ըստ այդմ, Ստեփանոս Սիւնեցին մարգարէա-



կան օրհնութիւնների կցուրդները շարել է որպէս Յարութեան Օրհնութիւններ եւ նրանց կցելով մասնաւոր Հարց (իր գործատունով), Մեծացուցէ, Ողորմեա, Տէր Յերկնից, ձաշու եւ Համբարձի շարականները՝ կազմել է Աւագ Օրհնութեան կարգը կամ կանոնը: Ստեփանոս Սիւնեցին, մտցնելով կանոնը, կարող էր ուրիշ կանոնների շարականներ եւս կարգել. «կարգեաց շարեաց շարականս», բայց այդ չգիտեմք»:(37)

Թերեւս Արեղեանի ենթադրութիւնն անհիմն չէ, սակայն անհաւանական է թուում, որ մարգարէական օրհնութիւններին, դատելով բազմաթիւ ձեռագիր ժամագրքերում պահպանուած դրանց խազագրումներից, որոնք վկայում են տուեալ երգասացութիւնների ծորերգային-զարդուորուն (մելիզմատիկ) մեղեդիական նկարագիրը, կցուրդներ աւելացնելու անհրաժեշտութիւն առաջանար: Այդ է յուշում ժամասացութեան երաժշտական ձեւաւորման տարրական տրամաբանութիւնը: Անկասկած, Աւագ Օրհնութիւններն ինքնուրոյն եւ յատուկ նպատակով յօրինուած երգեր էին:

Շատ նիշտ է ձեւակերպել իրողութիւնը Հ. Անառեանը իր «Հայոց անձնանունների բառարանում»՝ գրելով «Ստեփանոս Ա Սիւնեցի եպիսկոպոս Սիւնեաց. Դուինի աւագերեցի որդին. աշակերտ Մովսէս Սիւնեցու»:(38)

Մեր օրերում Մեսրոպ վրդ. Գրիգորեանը (այժմ արքեպիսկոպոս) իր «Ստեփանոս Սիւնեցի» աշխատութեան մէջ գրում է հետեւեալը. «Ստ. Սիւնեցիի կենսագիրները, ինչպէս եւ տպագիր ու ձեռագիր շարականոցներու սկիզբը գետեղուած շարականագիրներու ցուցակները, կը վկայեն թէ իր

հեղինակութիւնն են Քրիստոսի յարութեան յիշատակին նուիրուած Աւագ Օրհնութիւնները»:(39) Սակայն, մէջբերելով յայտնի հայագէտների տեսակէտները խնդրոյ առարկայ հարցի վերաբերեալ, Մ. Գրիգորեանը ի վերջոյ հակում է Մ. Զամչեանի ոչ նիշտ տեսակէտին:

Նշեմք, որ Ստեփանոս Սիւնեցուն որպէս VIIIդ. շարականագիր եւ տեսարան են համարում նաեւ մեծանուն երաժշտագէտներ Ե. Տնտեսեանը, (40), պրոֆ. Ք. Քուշնարեանը (41) եւ պրոֆ. Ռ. Աթաեանը (42):

Թերեւս մեր տեսակէտը յստակ դարձաւ ընթերցողին, թէպէտ Ստեփանոս Սիւնեցու ստեղծագործական ժառանգութեան հետ կապուած դեռ իրենց վերջնական լուծումը չստացած բազում հարցեր կան, սակայն դրանք սոյն յօդուածի նպատակից դուրս են՝ պահանջելով առանձին ուսումնասիրութիւն: Այսպէս, օրինակ, ընթերցողը հաւանաբար նկատեց, որ դեռեւս միջնադարեան մատենագիրներն ամենուրեք նշել են, թէ Ստեփանոս Սիւնեցին հեղինակել է միայն եօթնաւոր անգլանակներ իր Աւագ Օրհնութիւնները, իսկ Վառ ձայնին, այսինքն՝ Գ. կողմին պատկանող շարականները յօրինել է Ներսէս Շնորհալին: Վառ ձայնին, Աւագ Օրհնութիւնների ուսումնասիրութեան հարցով յատուկ զբաղուել է երաժշտագէտ Լ. Յակոբեանը, որը տուեալ շարականների տաղաչափութեան ֆննդութեան հիման վրայ համոզեցուցիչ կերպով ապացուցել է, որ վերջիններս, իրօք, տարբերում են իրենց տաղաչափական եւ բովանդակային առանձնատկութիւններով եւ ստեղծուել են աւելի ուշ շրջանում:(43)

ԱՆՆԱ ԱՐԵՒՇԱՏԵԱՆ



## ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՆԵՐ

<sup>1</sup> Տե՛ս Ն. Թահմիզյան, Սյունեցի երկու համանուն երաժիշկները և Հարություն Ավագ Օրհնությունները, «Էջմիածին», 1973, թիվ 2, էջ 29-43:

<sup>2</sup> Н. К. Тагмизян, Теория музыки в древней Армении, Ереван, 1977, сс. 50, 52, 81-87, 95, 105, 141, 142, 165-167; его же, Шарахан, Из армянской поэзии V-XV вв., Ереван, 1990, сс. 6, 42-46, 205-206; см. также С. Золян, О поэтике шараханов (заметки переводчика), там же, с. 174.

<sup>3</sup> Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 11, Երևան, 1985, էջ 137-138:

<sup>4</sup> Ն. Թահմիզյան, Ոսկեփորիկ, Ե., 1980, նույնի, Ոսկեփորիկ, Լոս-Անջելես, 1995:

<sup>5</sup> Գ. Յովսեփյան, Միսիրյար Այրիվանեցի, Երուսաղեմ, 1931, էջ 20:

<sup>6</sup> Սրբիսանոս Օրբելյան, Պարմուրիս նահանգին Սիսական, Տփղիս, 1910, էջ 138-139:

<sup>7</sup> Տե՛ս Մաշտոցի անվ. Մարենադարան, ձև. 3276, էջ 86ա:

<sup>8</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Շարական, հ. Ա, Երևան, 1997, Ա. Արևշատյան, Լ. Հակոբյան, Առաջարկ, էջ XIII-XIX:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ XIX, տե՛ս ժամանակագրությունը: Տե՛ս նաև A. S. Arevsatyan, Deux textes arméniens attribués à Basile de Césarée sur l'Interprétation des modes musicaux, "Revue des Etudes Arméniennes", 26, 1996-1997:

<sup>10</sup> Տե՛ս Շարական, Առաջարկ, էջ XIX:

<sup>11</sup> Տե՛ս Աս. Մնացականյան, Սրբիսանոս Սյունեցու նորահայտ տաղերը, «ԲՄ», 1973, N 11, էջ 275-290: Երջանկահիշարակ հմուտ բանասերի այս ուշագրավ հոդվածը չափազանց շահեկան տվյալներ է պարունակում Սյու. Սյունեցու անձի և սյունեցիականության ոլորտների ճշգրտման առումով: Հոդվածը հիմնված է ՄՄ, N 3503 հայտնի Գանձարանի ընձեռած տվյալների վրա, որոնք, սակայն, վրիպել են այլ ուսումնասիրողների ուշադրությունից: Տվյալ Գանձարանն ուշագրավ է մեր վաղ միջնադարի մի շարք երևելի շարականագիրների գրչին պատկանող և ձևապատկեր գեղարվեստական տարրերով: Դրանք են՝ Սահակ Պարթև - «Անպարագրեղիս երկնի և երկիրի», Մովսես Խորենացի - Ի Սիսեաց եպիսկոպոստ ի Ս. Խաչն «Սկիզբն անըսկզբան սկզբնառարնալ խորհրդոց սկիզբն», Սյու. Սիսեցի եպիսկոպոսի տաղս խաչին. «Սրբոյ խաչին զարուրիս վաղագոյն տեսնալ»: Դրանով ապացուցվում է փաստորեն տաղային ժանրի Գրիգոր Նարեկացուն նախորդող զարգացման շրջանի առկայությունը հայ ազգային հոգևոր երգարվեստում:

<sup>12</sup> Տե՛ս նաև նույն հարցին նվիրված ուշագրավ և հանգամանալից հեղինակ հոդվածը. Լ. Գ. Սարգսյան, Կարծեցյալ Սրբիսանոս Սյունեցի շարականագիր, «ԼՏԳ», 1993, N 1, էջ 120-129:

<sup>13</sup> Տե՛ս Տ. Անասյան, Հայկական մանրանագիտություն, հ. Ա, Երևան, 1959, էջ LXI-LXXIV:

<sup>14</sup> Մայր ցուցակ հայերեն ձևագրաց Ս. Յակոբյանի վանքի, հ. Դ, աշխ. Նորայր եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1965, էջ 485:

<sup>15</sup> Տ. Անասյան, նշվ. աշխ., էջ LXV-LXIX:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ LXIX-LXXIV:

<sup>17</sup> Մայր ցուցակ հայերեն ձևագրաց Ս. Յակոբյանի վանքի, էջ 485:

<sup>18</sup> Տ. Անասյան, նշվ. աշխ., էջ LXVI:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ LXVII:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ LXIX:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ LXXI:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ LXXIV:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ LXVIII:

<sup>24</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Շարական, հ. Ա, Առաջարկ, էջ XIII-XV, XVII-XIX:

<sup>25</sup> Տե՛ս նաև նույն խնդրին նվիրված ուշագրավ ու ծավալուն հեղինակ հոդվածը՝ Լ. Գ. Սարգսյան, Կարծեցյալ Սրբիսանոս Սյունեցի շարականագիր V դարի, «ԼՏԳ», 1993, N 1, էջ 120-129:

<sup>26</sup> Տե՛ս Տ. Անասյան, նշվ. աշխ., էջ LXVIII:

<sup>27</sup> Տե՛ս Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իր, Վենետիկ, 1873, էջ 82:

<sup>28</sup> Տե՛ս Մ. Զամչևան, Հայոց պարմուրիս, հ. Ա, Կ. Պոլիս, 1784, էջ 782:

<sup>29</sup> Հագար Զահեկեցի, Գիրք իր կոչի Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1764, էջ 625:

<sup>30</sup> Տե՛ս, Բացադրություն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 672:

<sup>31</sup> Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1890, էջ 128:

<sup>32</sup> Տե՛ս Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իր, Վենետիկ, 1873, էջ 89:

<sup>33</sup> Տե՛ս Մաղաքիա արքեպս. Օրմանեան, Ազգապարտմ, հ. Ա, պրակ Բ, Քյոյրոք, 1912, էջ 862-864:

<sup>34</sup> Տե՛ս «Տաճար», 1910, էջ 654-656:



- <sup>35</sup> ՏՆ՝ Մ. Արևիյան, Շարականների մասին, «Արարատ», 1912, էջ 484-488;
- <sup>36</sup> ՏՆ՝ «Արարատ», էջ 833-834;
- <sup>37</sup> ՏՆ՝ Պապմություն հայ հին գրականության, հ. Ա, Երևան, 1944, էջ 486;
- <sup>38</sup> ՏՆ՝ Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1943, էջ 605;
- <sup>39</sup> ՄՆարոզ վրդ. Գրիգորեան, Սրբափանոս Սիւնեցի, Բնյութ, 1958, էջ 40-41;
- <sup>40</sup> ՏՆ՝ Ե. Տերտեմյան, Նկարագիր նրբոց Հայաստանաց Ս. Եկեղեցոյ եւ յանկուած բովանդակութիւն երգոց ըստ ուրն ծայնից, Բ. փպր., Իսթանպուլ, 1933, էջ 136;
- <sup>41</sup> X. C. Кушнарзев, Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958, стр. 115.
- <sup>42</sup> Ռ. Ա. Աթայան, Հայկական խազային նութագրություն, Երևան, 1959, էջ 73-74;
- <sup>43</sup> L. Hakobyan, The Versification of the Šarakan-hymns, "REArm", 24, 1993, pp. 118-119): Գուցն հենց ա՛յդ հանգամանքը նկարի ունեն Անանուն խմբագրության հեղինակը՝ գրելով «Սրբափանոս Սիւնեցի առաջինն, որ յաշակերպաց անկի Սրբոց Թարգմանչաց»՝ ցանկանալով նշել, որ Ավագ Օրհնությունները կերպովիս Սրբ. Սյունեցին հավաքարիմ է մնացել Սուրբ Թարգմանիչների առաջին խաբաշունչ և վսեմ կցորդների ընդհանուր ոգուն և ոճին՝ յուրովի հարստացնելով կցորդի ժանրը, այդպիսով դառնալով ոսկեդարյան շարականագիրների թողած ավանդույթների արժանի շարունակողը:

Ա. ԱՐԵՒՇԱՏԵԱՆ